


Ա. ԶԵՐՆԻԿԻ

# ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ



623  
Զ-45

ՊԵՏՀՐԱՑ

1938

ԵԵՐԵՎԱՆ

04 AUG 2010

Ա. ԶԵՐՆԻԿ

623

Մ.

2-45

# ԿԱՊԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ



ՊԵՏՀՐԱՍ

1938

ՅԵՐԵՎԱՆ

16 JUL 2013

195

Յ-րդ կարգի ինտենդանս Զերնիկ Մ. Ս.  
«Կապի միջոցները»

Քրքույկում պատմվում ե այն մասին, թե ինչ բան ե կապը,  
ինչպիսի կապի միջոցներ ունեն զորքերը և ինչպես այդ միջոցները  
կիրառվում են զորքի մանր ստորաբաժանումներում մինչև դու-  
մարտակը ներառյալ: Համարոտ կիրագով նկարագրված են նաև  
կապի այն միջոցները, վորոնք կիրառվում են գնդում, զորքի  
ավելի մեծ միացություններում, շտաբներում և ավիացիայի մեջ:



1480

39



ԻՆՉ ԲԱՆ Ե ԿԱՊԸ ՅԵՎ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՎՈՐ  
Ե ՆԱ ԶՈՐՔԵՐԻՆ

Մարտի հաջողությունը կախված ե զորքի համե-  
րաշին և համաձայնեցված գործողություններից: Գոր-  
ծողությունների միասնություն ձեռք բերելու համար  
պետք ե անընդհատ զեկավարել կոփվը: Դրա համար  
հրամանատարներն ուսումնասիրում են իրազրությու-  
նը, վորոշումներ են կայացնում և կիրառում են այն,  
ցույց տալով զորքին՝ յերբ, ուր և ինչ ճանապարհներով  
պետք ե գնալ, վորտեղ կանգ առնել, ինչպես գարել  
մարտը և այլն: Զորքերն իրենց հերթին զեկույցներ  
են ուղարկում իրազրության մեջ տեղի ունեցող բոլոր  
փոփոխությունների մասին ավագ զորապետներին և  
փոխադարձ իրազեկության կարգով նույնպիսի գե-  
կույցներ ստանում են իրենք հարևաններից և այլ զորա-  
մասերից:

Հասկանալի յէ, վոր յենթակա զորքերը զեկավարե-

լու և հարեանների հետ համաձայնեցքած գործողություն կատարելու համար հրամանատարները պետք են մշտապես և հուսալի կերպով կապված լինեն նրանց հետ:

Հրամանատարը հրամանները տալիս են ձայնով: Շատ անդամ զորամասի հրամանատարը կանչում է իր մոտ ստորաբաժանումների հրամանատարներին, կամ ինքը շրջադաշում է ստորաբաժանումները, վորպեսդի անձամբ տեղեկություններ ստանա մարտական իրադրության մասին կամ նոր ցուցումներ տա: Այդ դեպքում կապը հրամանատարների մեջ արտահայտվում է տնօնական վիճան միջոցով:

Ժամանակակից մարտական իրադրության մեջ զորամասերը ցըված են տասնյակ և հարյուրավոր կիլոմետրով իրարից հեռու: Հսկայական չափով զարդացել են հրացանային, գնդացրային և հրետանային կրակի հզորությունը: Առանձին մարտիկները գանվում են իրարից հեռու: Այս բոլորը դժվարացնում են կապը կուլի ժամանակ ձայնի և անձնական հաղորդակցության միջոցով: Այդ պատճառով զորքին հարկավոր են հատուկ կապի միջացնելու:

Անցյալում, յերբ բանակները բազմաթիվ չեյին և կովում եյին փակ զորայուններով, զորքերն սպառվում եյին կապի հասարակ միջոցներով: Զայն, փողերի հընչյուն, սուրհանդակ: Սակայն բանակների քանակական աճի, մարտական տեխնիկայի քանակի ավելացման և կուլի ձեռերի բարդացման հետ միասին, պահանջ զգացվեց կապի նոր միջոցների, վորոնցով կարելի յեզրքերը գեկավարել հեռվից, անհրաժեշտ հրամանները և գեկույցները հաղորդել հսկայական արագությամբ

(յերբեմն մի ակնթարթում) տասնյակ և հարյուրավոր կիլոմետր տարածության վրա: Տեխնիկայի նվաճումների շնորհիվ զորքերն ստացան մի շարք այդպիսի կապի միջոցներ՝ որինակ՝ հեռախոս, հեռագիր, ռադիո:

Հսկանալի յե, վոր կապի բարդ տեխնիկական միջոցների ոգտագործման համար հարկավոր են մասնագետներ: Դրա համար Կարմիր բանակում կան հատուկ զրամանություններ (կապի զորքեր—ՅՈՒՆԻՏ և ՄԱՐԴՎԻՐ կապը), վորոնց ինդիբն ե—սպասարկել զորքերի կապը:

Կապի տեխնիկական միջոցների հետ պետք է ծանոթ լինեն նաև բոլոր տեսակի զորքերի մարտիկները, վորպեսդի հարկ յեղած գեպքում նրանք կարողանան փոխարինել շարքից զուրս յեկած կապավոր մարտիկին:

Զորքին կապը հարկավոր է ամեն տեսակ մարտական աշխատանք կատարելիս: Բայց այդ նպատակով զորձաղբկող միջոցներն ինարկե կախված կլինեն զինվորական ստորաբաժանման մեծությունից և պայմաններից: Այսպես, այն ջոկը, վորոնեղ մարտիկներն անմիջականորեն իրար մոտ են գտնվում վոչ միայն յերթի, այլ և հանգստի ժամանակ և նույնիսկ մարտում, բոլորովին կարիք չի զգում կապի այնպիսի բարդ տեխնիկական միջոցների, ինչպես հեռախոսը կամ ռադիոն: Վաշտին, վորի կազմում կան մի քանի գասակներ, և հաճախ մի քանի հարյուր մետր տարածության մեջ իրարից հեռու յեն գտնվում, հարկավոր են կապի ավելի բարդ միջոցներ: Իսկ զումարտակում և զնողում անհրաժեշտ են արդեն կապի այնպիսի միջոցներ, վորոնք կարող են գործել տասնյակ կիլոմետր տարածության վրա:

## ԿԱՊԸ ԶՈԿՈՒՄ

Զոկում կիրառվում են բացառապես կապի հասարակ միջոցները։ Այդ միջոցներն են՝ հրամանների և գեղուցների հաղորդումը ձայնով, հնչյունային և տեսողական ազդանշանման (сигнализация) հասարակ յեղանակները մեկից-մյուսին, գեկուցազբեր ցցելը, կապավոր մարտիկներ։

ՀՐԱՄԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԶԵԿՈՒՅՑՅՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ  
ԶՈՅՆՈՎ

Հրամանը կարող է ցրվել կամ մարտիկներին անմիջական կատարման համար, կամ զորայունի միջով մի մարտիկից մյուս մարտիկին հասցնելու համար։ Առաջին զեպքում մարտիկից պահանջվում և հրամանը պարզ ըմբռնել և ճիշտ կատարել այն, ինչ վոր հրամայված ե, որինակ, պառկել և խրամատավորվել (օկոպաթեա), շարժվել առաջ, կրակել, անցնել հարձակման ՅԵՐԿՐՈՐԴ գեպքում մարտիկն ընդունում և հրամանը հրամանատարից կամ իր հարեանից և հաղորդում այն մյուսին, ըստ զորայունի։ Այստեղ կարելը և այն, վոր հրամանը հաղորդվի ճշտությամբ, խոսք առ խոսք, վորովհետև յուրաքանչյուր սխալ կարող և հասցնել հրամանի չկատարման։ Դրա համար մարտիկը պետք եռշաղությամբ հետուական ազդանշանման (սիզնալիգացիայի) պարզագույն միջոցներն ու յեղանակները։

կատարի զրանք և կանոնավոր կերպով հայտնի իր հարևաններին։

Բացի հրամաններից, ձայնով հաղորդվում են յերբեմն դիտողների (համարակալի պատճենագիր կուտակ և լինեն կարձ, հասկանալի, ճշգրիտ և հազարդվեն պարզ, քիչ բառերով։ Որինակ՝ տեսնելով իրենից առաջ 600 մետրի վրա, առանձին ծառից ձախ, հակառակորդի խումբ 7 հոգուց բաղկացած, դիտողը զեկուցում ե իր հրամանատարին։

— Ուղիղ, առանձին ծառից ձախ, հակառակորդի խումբ 7 մարդուց, 600։

Զեկուցի վերջում ցույց տված թիվը նշանակում է տարածությունը մետրերով։ Այդպիսի զեկուցի մեջ չկա վոչ մի ավելորդ բառ և միենույն ժամանակ շատ ճիշտ հաղորդված ե այն, ինչ անհրաժեշտ ե։

Կապը ձայնով՝ կարելի յե պահպանել վոչ մեծ տարածության վրա, որինակ՝ մինչև 500 քայլ։ Բատ վորում, ձայնի միջոցով կապը լավ և զվարապես յերթի և հանգստի ժամանակ։ Մարտում կապը ձայնի միջոցով՝ միշտ հնարավոր չե պահպանել, վորովհետև հրացներով և գնդացիրներով հրածգությունը, ոռում-բերի պայթյունները խլացնում են ձայնը։ Դրա համար ջոկում, մահավանդ հակառակորդին մոտ գտնվելու գեպքում, լայնորեն կիրառում են հնչյունային և տեսողական ազդանշանման (սիզնալիգացիայի) պարզագույն միջոցներն ու յեղանակները։

ՀՆՉՅՈՒՆԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆՄԱՆ ՊԱՐԳԱԳՈՒՅՑՆ  
ՄԻՋՈՅՆԵՐԸ

Հնյանային ազդանշանման միջոցներին վերաբերում են. սուլիչը (свисток), խոսափողը (рупор), շեփոր

(ռօջօկ), զանգը, հրեաանային ռումբի պարկուճը (բոլե-  
զա), սելսի կամ թուջե սալի կտորը և այլ իրեր։ Այդ  
միջոցներով հնարավոր և լինում տալ հնչյունային  
աղքանշաններ, վորոնք լսելի յեն ավելի հեռվից, քան  
մարդու ձայնը, և ավելի սուր կերպով են հնչում կովի  
աղմուկի մեջ։ Այդ միջոցներով կաբելի յև տալ միայն  
ավելի պարզ պայմանական ազդանեներ, որինակ՝  
աղքանշան հարձակում սկսելու կամ կրակ բաց անե-  
լու համար, ողնության կոչ, գաղային տագնապ։

Հնչյունային աղքանշանման միջոցներից ջոկում  
կիրառվում ե գլխավորապես առվիչը։ Սուրբչի ձայնը  
սուր կերպով լսվում ե կովի աղմուկի մեջ և լավ միջոց  
և հանդիսանում կրակ բաց անելու կամ գաղարեցնե-  
լու, հավաքվելու, հարձակում սկսելու վերաբերյալ աղ-  
քանշան տալու համար։

Բացի այդ միջոցներից, ջոկում կապի համար ող-  
տաղործվում ե թուչունների, անասունների, գաղան-  
ների ձայնանմանությունը (մանավանդ զիշերը). Կա-  
պի այդ միջոցով պետք ե ոգտվել հմտությամբ։ Չի  
կարելի, որինակ, նմանեցնել կլիփ կանչին զիշերը,  
յերբ նա քնած ե, ավելի լավ ե նմանեցնել բվին։ Զայ-  
նանմանությունը պետք ե կատարել հմտությամբ,  
վորպեսզի հակառակորդը չկասկածի, թե խարեայու-  
թյուն ե։

Ենթարք (ռօջօկ), վորի ձայնը լսվում ե ավելի հեռ-  
վից, կիրառվում ե արգեն գասակների և վաշտի հրա-  
մանատարի հետ կապ պահելու համար։

## ՏԵՍՈՂԱԿԱՆ ԱԶԴԱՆՇԱՆՄԱՆ ՊԱՐՁԱԳՈՒՅՑՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հնչյունային աղքանշանները (սիրալի) մարտական  
պայմաններում միշտ լսելի չեն լինի ուժեղ հրաձգու-  
թյան պատճառով։ Հաճախ հնչյունային աղքանշաննե-  
րով չի կարելի ոգտվել և այն պատճառով, վոր ձայնը  
կարող ե մատնել հակառակորդին զորքի զասավորու-  
թյունը տվյալ տեղում։ Այդ պատճառով հնչյունային  
աղքանշանների հետ միասին զորքերը լայն կերպով  
ոգտագործում են ենարդական աղքանական միջոցներ։  
Այդ միջոցներից պարզապույններն են հանդիսանում՝  
պայմանական նշանները ձեռով (գլխարկով, թրով),  
նշանաձողեր (վեխ), խարույկներ, հրթիռներ, զրոշակ-  
ներ և լուսազգանշանային ապարատներ (լամպեր)։

Զոկում ավելի հաճախ կիրառում են պայմանական  
նշաններ ձեռքով (գլխարկով, թրով), վորոնք տեսա-  
նելի յեն մինչեւ 500—600 քայլ հեռավորության վրա։  
Այդ աղքանշանները տրվում են այնպես, վոր նրանք  
լինեն վոչ միայն լավ տեսանելի, այլ և հասկանալի։  
Դրա համար հետեւակում ե հեծելազորում գործազրիքում  
են նաև և առաջ կանոնագրեալին աղքանեներ։ Բացի  
կանոնագրեալին աղքանշաններից կարելի յէ կիրառել և  
ուրիշ տեսակները, բայց այդ զեպքում ամեն անդամ  
անպայման պետք ե նախորոք պայմանավորվել այդ  
նոր աղքանշանների նշանակության մասին։

Նշանաձանդելով յեվ խարայկներ գործազրիքում են հաղ-  
վագեպ, միայն այն զեպքում, յերբ այլ կերպ հնարա-  
վոր չի աղքանշան տալ։ Սովորաբար զրանցով աղքա-  
նշան են տալիս տագնապի, ողնության են կանչում

կամ աղդանշան են տալիս ինքնաթիռին: Այդպիսի  
աղդանշանների նշանակության մասին պայմանակոր-  
վում են վաղորոք:

### ԳԵԿՈՒՅՑԱԳՐԵՐԻ ՓՈԽԱԶԴՈՒԹՅՈՒՆԸ

Բացի այն, վոր հրամանները հաղորդում են ձայնով  
և տեսողական (ձեռքով) ու հնչունային (սուլիչ)  
աղդանշանման սլարդագույն միջոցներով, ջոկում լայն  
կերպով գործադրվում ե գրավոր գեկույցների փոխա-  
ձգումը մեկի կողմից մյուսին:

Կապի այդ յեղանակը շատ պարզ է: Դրա ելությունն  
այն է, վոր հրամանատարի կամ մարտիկի կողմից  
կազմված զրագոր գեկույցը փաթաթում են փոքր քա-  
րի կամ գնում են փամփուշտի պարկուճի (գոլեզա)  
մեջ և զցում հարևան մարտիկին, ցույց տալով թե  
ում պետք ե այն հանձնել: Վերջինս իր հերթին շպեր-  
տում և զեկույցը մյուսին, մինչև վոր նա (զեկույցը)  
հանում ե նշանակված տեղը: Այդ միջոցն առանձ-  
հանում ե նշանակված տեղը: Այդ միջոցն առանձ-  
հապես զնահատելի յէ ուժեղ կրակի տակ տեղի ունե-  
ցող կովում, յերբ խրամատափորպած կամ տեղական  
իրերի հետեւ խրամատ մտած մարտիկները դժվար  
են կազ պահպանում ձայնով կամ կապի այլ պարզա-  
գույն միջոցներով:

Հ Ա. Բ Յ Ե Բ Բ

1. Կապի ինչպիսի միջոցներով են ուղարկում ջոկում:
2. Մոռավորապես ինչ հեռավորության վրա կարելի յէ հա-  
զորդել երաժանը (զեկույցը) ձայնով:
3. Ի՞նչ գեղքերում չէ կարելի կտոր պահպանել ձայնի միջոցով
- և ինչպիսի միջոցներով այդ գեղքում պետք ե ոգտվել:
4. Ի՞նչ աղդանշաններ են տրվում սուլիչով և շեփորով:

### ԿԱՊԸ ԴԱՍԱԿՈՒՄ ՅԵՎ ՎԱՇՏՈՒՄ

Այսպիսով ջոկում կապի համար կիրառվում են վոչ  
բարդ միջոցներ, վորոնք հեշտու թյամբ կարող ե ող-  
տագործել յուրաքանչյուր կարմիր բանակային: Դա-  
սակում և վաշտում կապի ծառայությունը (ըլյաժա  
ցանց) արգեն ավելի բարդ է, այնպես, ինչպես բարդ  
են նրանց վրա գրված մարտական խնդիրները: Դրա  
համար դասակում և վաշտում, բացի նկարագրված պար-  
զագույն միջոցներից, կան նաև հրթիռներ, փոքր-  
գորշակներ և հատուկ պատրաստված բանրերներ (ո-  
սկալինեցանցներ), զնդացրային վաշտում կան նույ-  
նիսկ հեռախոսային ապարատներ:


ՀԲԹԻՌՆԵՐ

Հրիոները մարտի շատ զեղքերում հանդիսանում են  
կապի լավ միջոց: Որինակ՝ հրթիռներով կարելի յէ  
հաղորդել վորոշ սահմանին հասնելու մասին, առաջ  
բերել հրետանու կրակ, ազդանշան տալ ողային տագ-  
նապի համար: Հրթիռները զործադրվում են թե յերե-  
կը և թե զիշերը:

Հրթիռները լինում են մի քանի գույնի (սպիտակ,  
կանաչ, կարմիր, նույնպես և ծխային), վրա համար  
նրանցից կարելի յէ կազմել զանազան պայմանական  
աղդանշաններ, որինակ՝ 2 կարմիր հրթիռներ—կրակ  
փոխադրել առաջ, 1 կարմիր և 1 կանաչ—միալ տեղում.

**Յ կանաչ—գնդացիբների կրակը խանգարում և առաջ շարժվել:**

Հրթիռները բաց են թողնում ազդանետային լաւագործ փամփուտից (патрон), վորը դուրս է թոշում հատուկ փշտովից (пистолет) (նկար 1): Բացի զրանից, հրթիռները բաց են թողնում նաև ձեռքի լաւագործ փամփուտից (նկար 2):




Նկար 1. Փշտովի ազդանշանային փամփուտներ  
կրակելու համար (լցնելու  
մոմենտին):

Նկար 2. Ձեռքի լուսավորող փամփուտ (ազդանշանային տալուց առաջ):

Ջեռքի փամփուտը զրսից ունի հենարանային ողակ (опорное колцо) (յելուստ—выступ): Հրթիռը բաց թողնելիս, փամփուտը բռնում են ձախ ձեռքով ողակի տակից, իսկ փամփուտի վերի ձայրն ուղղում են վերև կամ թեքում են պահանջված կողմը: Դրանից

հետո արագ քաշում են կրակման ձգանը (запальныи шнур), և հրթիռը (լուսավորող բաղադրությունը) դռւրս է թոշում փամփուտից ողը (նկար 3): Այդ առաջ են դալիս նրանից, վոր փամփուտի մեջ կա վառողի վոչ մեծ լիցք (заряд), վորը բոցավառվում է ձգանը քաշելիս, և վառվելով գոյացող վառողային գազերով, դռւրս է մղում լուսավորող բաղադրությունը (աստղիկ-ները):



Նկար 3. Ազդանշանում հրթիռներով:

Ասածից պարզ ե, վոր լուսավորող փամփուշտը պահանջում ե զգույշ վերաբերմունք գեղի ինքը: Այն չի կարելի թողնել կրակին մոտ կամ պահել խոնալ տեղում: Միայն կանոնավոր վիճակում պահված չոր փամփուշտը կդորձի անխափան—հարկ յեղած բոպեցին:

Հրթիոր տեսանելի յե ցերեկը մինչև 5 կիլոմետր տարածության վրա, իսկ գիշերը—մինչև 10 կիլոմետր: Այսպիսով ճեռքով տրված պայմանական ազդանշանների հետ համեմատած՝ նա ունի զորողության մեծ հեռավորություն: Սակայն հրթիոներն ունեն խոշոր թերություն՝ հակառակորդը հեշտությամբ կարող ե նկատել դրանց և գորշել մեր տեղը: Հրթիոի այդ թերությունը պետք է միշտ հաշվի առնել՝ այն զործալլելիս, և այն դեպքում, յերբ կարևոր ե թաղցընել զորքի գոյությունը տվյալ տեղում, հրթիոով չպետք է ոգտվել:

#### ԱԶԳԱՆՇԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԱԿԻԿԱՆՑՐՈՎ

Ազգանշանման համար ոգտվում են յերկու փոքր զրոշակներով—գեղին և ալկարմիր զույնի: Ամառը գեղին զրոշակի փոխարեն զործազրում են սպիտակը:

Ազգանշանների կամ կարգադրությունների հազորումը զրոշակիկներով՝ կատարվում ե Մարզի այբուրենի նշաններով՝ կետերով և գծերով: Կետը հազորդվում է մի գեղին (կամ սպիտակ) զրոշակի բարձրացումով, իսկ գիծը—յերկու զրոշակների բարձրացումով:

Մորգեյի այբուրենի նշաններով ազգանշանների հաշորդումը պահանջում է համեմատաբար շատ ժամանակ (լավագույն դեպքում մի բոպեց 10—15

տար): Այդ պատճառով զրոշակային ազգանշանումների համար սահմանված ե կրծատված այրութեն (ԿՕՃ), վորով ամբողջ բառը հաղորդվում է մեկ-յերկու տառով կամ թվանշանով:

Դրոշակիկներով հաղորդումը կատարելուց առաջ ազգանշանային պոստերը՝ կանչելու ազդանշանների միջոցով փոխանակում են հեռականչով (ՎԵՅԶԵՎ) և արձագանքի տալով (ՕՏՅԱՅ) (պատասխան-ազդանշանն ընդունելու պատրաստականության մասին):

Որինակ՝ 1-ին վաշտը կարող է ունենալ վորպես կանչելու ազդանշան մի բարձրացրած կարմիր զրոշակ, թեթև շարժվող, իսկ 2-րդ վաշտը—յերկու բարձրացրած գրոշակ: 1-ին վաշտի ազդանշանողը հրաման ստանալով 2-րդ վաշտի ազդանշանային պոստը կանչելու, տալիս ե այդ պոստը կանչելու ազդանշան, այսինքն բարձրացնում ե վերև յերկու զրոշակիկները և թեթև կերպով շարժում ե նրանց զիլսի վերև գեպի յերկու կողմ՝ սպասելով արձագանք-պատասխանի: 2-րդ վաշտի ազդանշանողը, տեսնելով իր պոստի կանչելու ազդանշանը, արձագանքում ե (даєт օտզայի), այսինքն բարձրացնում ե յերկու զրոշակիկներն ել և նույնական թեթև կերպով շարժում ե նրանց զիլսի վերև:

Ստանալով պատասխան, 1-ին վաշտի ազդանշանողն սկսում է ազդանշանի հաղորդումը: Յուրաքանչյուր տառի (թվանշանի) հաղորդումից հետո ազդանշանողը կատարում է փոքր բափանարաւմ, բառի կամ թվանշանների խմբի վերջանալուց հետո—մեծ բափանարաւմ, իսկ ամբողջ հաղորդումը վերջացնելուց հետո—լրիվ բափանարաւմ:

Կանգնած վիճակում կատարվող ազդանշանումների

ժամանակ շարժումները կատարվում են այս կարգով: Փոքր թափահարումը—աջ ձեռքը դրոշակով հեռացնել մի կողմ, ձգլած ձեռքի դաստակը պահել դոտու բարձրության վրա, ապա աջ ձեռքը շարժել առաջ դեպի ձախ, վորից հետո ձեռքը ազատ կերպով իջեցնել ներքեվ:


Մեծ բափահարումը—յերկու ձեռները դրոշակներով տարածել յերկու կողմ գոտու բարձրությամբ (կես թափահարումով): Հետաղաբարձ շարժումով խաչաձևել ձեռքերն իր առջև, ապա նորից բաժանել նրանց, վորից հետո ազատ կերպով իջեցնել ներքեւ:

Երիվ բափահարում—յերկու ձեռները տարածել յերկու կողմ ուսերի բարձրությամբ (լրիվ թափ), հետաղաբարձ շարժումով խաչաձևել ձեռքերն իր առջև գոտու բարձրությամբ և նորից բաժանել նրանց յերկու կողմ մինչև ուսերի բարձրությունը: Այդպես մի անգամ ես կրկնելուց հետո ձեռներն ազատ իջեցնել ներքեւ:

Ազգանշանումը խրամատից կամ գետանի վրա՝ մասոկած հազորգելիս թափահարումները կատարում են այսպես. փոքր թափահարումը՝ բարձրացնել աջ ձեռքը դրոշակով և հակառակ շարժումով իջեցնել: Մեծ թափահարումը—բարձրացնել յերկու ձեռքերը դրոշակներով և հակառակ շարժումով իջեցնել: Լրիվ թափահարումը—նույնպես, ինչպես մեծ թափը յերկու անգամ կրկնված:

Յեթե ընդունելու ժամանակ ազգանշանը չի հասկանում վորեն ազգանշան, նա մի քանի անգամ բարձրացնում է գեղին դրոշակիկը (տալիս ե մի շաբք կետեր): Հաղորդողը տեսնելով այդ, տալիս ե կանչելու ազգանշան և, պատասխան ստանալով, շարունակում ե

հաղորդումը, սկսելով այն տառից կամ թվանշանից, վորի հաղորդման ժամանակ նա տեսել է «Հասոկացա» ազգանշանը:



Նկար 4. Ազգանշանումները դրոշակիկներով:

Դրոշակիկներով ազգանշանումները հնարավոր են մինչեվ մեկ և կես կիլոմետր հեռավորության վրա, բայց վատահ տեսանելիությունը մինչեւ 500 մետր է:

Ազգանշանային պոստի համար ընտրում են միշտ այնպիսի տեղ, վոր ազգանշանները հակառակորդը չնկատի (նկար 4):

Ընդհանրապես կիրառելով տեսալուկան ազգանշանները միջացները (դրոշակիկներ, պայմանական նշաններ ձեռքով), պետք է միշտ հիշել բաղարկման մասին, այսինքն պոստերի և տառանձին ազգանշանողների այնպիսի



գասավորման մասին, վորի դեպքում հակառակորդը չի կարող տեսնել աղջանշանների հաղորդումը:

## ԼՐԱՏԱՐՆԵՐ

Հասկանալի յե, վոր հնչյունային և տեսողական աղջանշանման բոլոր նկարագրված միջոցները կարելի յե կիրառել միայն այն դեպքում, յեթե հաղորդումը և ընդունողը տեսնում կամ լսում են միմյանց: Խիստ կը արքաված տեղերում կամ անտառում այդ միջոցները հաճախ չի կարելի գործադրել: Այդ միջոցների մեծ թերությունը նաև այն է, վոր նրանց միջոցով կարելի յե հաղորդել միայն կարճ տեղեկությունները: Ուստի դասակում և վաշտում հրամանների և զեկույցների (մանավանդ գրավոր) հաղորդման համար լայն կերպով գործադրվում են լրացրեները (ոսկելինեությամբ):

Լրատար կարող է լինել յուրաքանչյուր մարտիկ: Ուստի բոլոր մարտիկները պետք է լավ իմաստն լրատարի պարտականությունները և հիմնարյանը կատարեն դրանք:

Լրատարները դասակում և վաշտում կարող են լինել հետիւնն, դահուկավոր, իսկ գումարտակում և աշվելի խոշոր ստորաբաժանումներում—հետիւնն, հեծյալ, հեծանվի, մոտացիկի, ավտոմոբիլի վրա և այլն:

Գործողության հասողությունը (ձալինութեան) և հաղորդման արագությունը լրատարների կողմից կախված ե, հասկանալի յե, նախ և առաջ փոխադրական միջոցներից, նաև տեղից, որվա ժամանակից (ցերեկը թե գիշերը) և այլ պայմաններից: Բոլոր դեպքերում լրատարը պետք է գործ զնի իր բոլոր ջանքերը, վորպեսզի կատարի հանձնարարությունը նշված ժամկերում գործուի գործում:

Մից վոչ ուշ իսկ հնարավորության դեպքում՝ ավելի շուտ:

Ստանալով հանձնարարությունը, լրատարը պարտագոր և իսկույն բարձրածայն կրկնել պիտի հրամանը և անցնել կատարմանը միայն այն ժամանակ, յերբ հաստատվի, վոր իրոք նա բոլորը ճիշտ հասկացել է:

Յեթե լրատարին վիճակի շարժվել առաջակոր չերտում, նա պարաւագոր և իրեն մատչելի ամեն տեսակ միջոցներով ու ամեն կերպ քողարկվել հակառակորդի կողմից՝ զետուի վրայից և ողի միջից կատարվող զիտողությունից: Հատկապես զգուշությամբ պետք ե մոտենալ շաբաներին, մեր գորամասերի գտնված տեղերին, հրամանատարական կետերին և դիտարաններին: Դրա համար լրատարը պետք է նշանակված տեղից 100—200 քայլի վրա կանգ առնի, զիտի իր շուրջը և ընտրի ծածկված ճանապարհ մինչև նշանակված տեղը: Հեծյալ կամ հեծանվավոր լրատարն ավելի լավ և փերջին հարյուր քայլն անցնի վստով, թողնելով ձին կամ հեծանիվը վստահելի, ծածկված տեղում:

Հրամանը կամ զեկույցը փոխանցելով, պետք է հաստատ համոզված լինել, վոր փոխանցում ես նրան, ում վոր պետք է փոխանցել: Գրավոր լինելու դեպքում պահանջել ստորագրություն ընդունման համար, նշելով ստանալու ճիշտ ժամանակը (ժամ և ըուղի): Բանագոր փոխանցման դեպքում պետք է հավաստիանալ, վոր ճշտորեն ընդունեցին այն և ուղիղ հասկացնեն:

Լրատարը վոչ մի զեպքում չի կարող անուշադրաւրյան մատնել հանձնարարության կատարումը: Հանգիպելով հակառակորդի, պետք է անհկատելի կերպով խուսափել հեռանալ նրանից, վորպեսզի հանձնարարությունը կարելի լինի տեղ հասցնել:

Միայն բացառիկ գեղքերում, յերբ նշանտկված տեղը համեմելու բոլոր փորձերն անհաջողության են մատնը վում, լրատարը կարող ե վերադառնալ, անմիջապես զեկուցելով իրեն ուղարկողին իր վերադարձի պատճառների մասին:

Գրավոր զեկույցը լրատարը պետք ե պահի իր շապակի կողքի գրավանում, կամ հատուկ պայուսակում, այնպես վոր չկորցնի այն: Գերի ընկնելու գեղքում լրատարը պարտավոր ե զեկույցը պատառուել մանր կը տորների կամ կուլ տալ:

Լրատարներն առաջ են շարժվում հետևյալ արագությամբ. հետիւնն քայլով՝ 4—5 կիլոմետր, իսկ վազելով՝ միջին թվով 8 կիլոմետր մի ժամում. հեծյալ լրատարները՝ միջին թվով 8—10 կիլոմետր մի ժամում, իսկ կարճ տեղամասում մինչև 12 կիլոմետր մի ժամում. գահուկներով կամ հեծանվով՝ 10—12 կիլոմետր մի ժամում. մոտոցիկլով՝ 25—30 կիլոմետր մի ժամում, ավտոմոբիլով՝ 40—45 կիլոմետր մի ժամում. ինքնաթիռով՝ 120 կիլոմետր և ավելի մի ժամում (նայած ինքնաթիռի սխակեմին):

### ՀԱՐՑԵՐ

1. Ինչպիսի ազդանշաններ կարելի յե հաղորդել հրթիռով:
2. Ի՞նչ պետք ե անել ձեռքի փամփուշտից հրթիռը քաց թողնելու համար:
3. Ի՞նչից պետք ե պահպանել լուսավորող փամփուշտները:
4. Կարելի՞ յե արդյոք, զանվելով զետքում (ձօօօր) ցերեկն ազդանշան տալ հրթիռով, յեթե զորասյունը զանվում ե դեպքեց 8 կիլոմետր հեռավորության վրա:
5. Ի՞նչ դեպքերում չպետք ե ոգտել կապի համար հրթիռի միջոցով:

6. Ի՞նչ պետք ե անի լրատարը՝ հրամանատարից հանձնարարություն ստանալուց հետո:
7. Վերաեղ պետք ե պահել գրավոր զեկույցը և ի՞նչ պետք ե անել այն՝ գերի ընկնելու դեպքում:
8. Ինչպես պետք ե մոտենալ հրամանատարական կետին՝ առաջավոր շերտում:
9. Ի՞նչ պետք ե անի լրատարը հակառակորդին պատահելիուր:
10. Ինչպիսի արագությամբ ե գնում հետիւնն լրատարը:

Բացի զրավոր զեկույցներից ու կարգադրություններից, վորոնք տեղափորկում են վզնոցին կպած մետաղյա տուփի կամ զրպանի մեջ (նկար 5), շները

## ԿԱՊԸ ԳՈՒՄԱՐՏԱԿՈՒՄ

Գումարտակի հրամանատարը պետք ե կապ պահպանի գումարտակի կազմի մեջ մտնող բոլոր ստորաբաժնումների և հարեան գումարտակների հետ։ Գումարտակը հաճախ զրավում ե յերկու կիլոմետր՝ ճակատի յերկարությամբ (պաշտպանողական մարտում), այդ պատճառով գումարտակում ավելի հուսալի և արագ հաղորդման համար, բացի կապի հասարակ միջոցներից—լրատարներից և կապի շներից,—կիրառվում են և կապի տեխնիկական միջոցներ՝ հեռախոս, լուսազդանշանման ապարատներ և ռադիո։

### ԿՈ.ԹԻ ՇՈՒՆ

Կապի շունը (նկ. 5) մեծ ոգնություն ե ցույց տալիս զորքին։ Նա փոխարինում ե մարտիկ-լրատարներին, հեշտացնելով կապն առաջավոր մասերում, պահպանության և հետախուզության գործում, մանավանդ զիշերը, մառախուղին կամ խիստ բաժանված վայրում։ Շունը հեշտությամբ ե անցնում զանազանակերպ վայրերից։ Նա քիչ նկատելի յե և այդ պատճառով նրան կարելի յե ողտափորձել կապի համար՝ նույնիսկ հակառակորդի կրակի տակ։

Շներին ուղարկում են միջին թվով մինչև 3 կիլոմետր հեռավորության վրա։ Նրանց առաջ շարժման արագությունը—1 կիլոմետր 3—5 րոպեյում։



Նկար 5. Կապի շուն։  
Վերեվում—ուղեցույցն ուղարկում ե շանը՝ զեկույցը նրա հետ (վերևի անկյունում ցույց ե տրված փոքր զրպանը զեկույցի համար)։ Սերմեվում—շունը հեռախոսային կաբել ե անցկացնուած։

կարող են տեղ հասցնել մեջքին կապած թեթև իրեր, անցկացնել հեռախոսային կարել թամբի վրայի հաշտութ կոճից (նկար 5):

Մարտիկները չպետք ե խանդարեն կապի շների աշխատանքը (չվախցնել, չկանչել նրանց և այլն):

#### ՀԵՌԱԽՈՍԱՑԻՆ ԿՈՊ

Հեռախոսով՝ գումարտակի հրամանատարը կապվում է վաշտերի և հարեան գումարտակների հետ: Գնդի շտարը կապված ե գումարտակների հետ նույնպես հեռախոսների միջոցով: Հրետանիում հեռախոսներով կապված են զիտարանները կրակային դիրքերի հետ և այլն:

Հեռախոսային ապարատն աշխատում ե ելեկտրական հոսանքով: Հոսանքի հաղորդիչ են հանդիսանում կամ յերկու հաղորդալար, կամ մի հաղորդալար և հողը: Վերջին դեպքում հողը փոխարինում ե յերկրորդ հաղորդալարին:


Հեռախոսով կարելի յե խոսել հետեւյալ հեռավորությամբ առաջավոր շերտի համար սովորական կարեւային գծերով—մինչև 15 կիլոմետր, կարելային հեռագրական գծերով—մինչև 30 կիլոմետր, ձողավոր (լարը կախած ե ձողերի վրա) գծով—մինչև 90 կիլոմետր, իսկ հատուկ սարքավորված մշտական գծով (լարը սյուների վրա) —մինչև 1000 և ավելի կիլոմետր:

Հեռախոսալարի (կարել) անցկացումը կատարվում ե բավականին արագ: Հետխոտն կապավորները հաղորդալարն անցկացնում են ժամը 5 կիլոմետր արագությամբ, ձիավորները —8—10 կիլոմետր մի ժամում,


իսկ ավտոմոբիլի կամ մոտոցիկի ոգնությամբ 10—25 կիլոմետր մի ժամում (նկար 6 և 7):

Չորքին հեռախոսային կապվով սպասարկելու համար Կարմիր բանակում գոյություն ունեն հատուկ կապի զորամասեր, վորոնց կազմի մեջ մտնում են նաև հեռախոսիչները: Սակայն նեռախոսային կապով ոգտվել պետք ե իմանան բոլոր մարդկները:


Քաղաքացիական պատերազմի ժամանակ Անհենկովի սպիտակ բանդաների հետ կովկելս մեր վաշտերից մեկն ընկավ վատանգավոր գրության մեջ: Նա անհրաժեշտություն զգաց զնդացիրների շուտափույթ ոգնության: Վաշտի միակ հեռախոսիչն սպանված էր: Վաշտի հրամանատարը պետք ե առանձնապես ուշադրությամբ դիտեր հակառակորդի զործողությունները, տար կարգադրություններ և այլն, ուստի նա չեր կարող մոտենալ հեռախոսին: Յեկ յեթե հեռախոսային



Նկար 6: Դաշտային հեռախոսային կարելի անցկացումը ցիկլից:



Նկար 7. Դաշտային ճեռախոսային կարելի անցկացումը ձիավոր ճեռախոսէչի կողմից:



Նկար 8. Մեր գատային ճեռախոսային ապարատը՝ ՍԻԱ-Փ, Զարկը ապարատի ընդհանուր տեսքը, յերբ ճեռախոսէչն այլ կայան և կանչում (ճեռախոսիչն աջ ձեռքի մատով սեղմում և կանչելու կոճակը), ապարատից զեպի աջ յերեռմ և կոճը ճեռախոսային կարելով:

Սջից—ձախ ձեռքի և միկրոնեռախոսային փողակի զրությունը խոսելու մամենակն (մատները սեղմում են փողակն ափի մեջ և միաժամանակ հույլ են տալիս խոսակցական կլապանը):


ապարատից ոգտվել գիտցող մի մարտիկ չգտնվեր ապա վաշտի զրությունը վատ կլիներ: Սակայն այդպիսի մարտիկ գտնվեց, և վաշտն իր ժամանակին ոգնություն ստացավ:

Ճեռախոսային ապարատից ոգտվելու համար պետք է գիտենալ նրա կազմությունը և աշխատանքի կարգը, այսինքն թե ինչպես պետք է միացնել և անջատել ապարատը զծից, ինչպես կանչել հարկավոր պոստը կենտրոնական կայանի միջոցով, ինչպես տանել խոսակցությունը ճեռախոսով, ինչպես միահյուսել լարը:

Կարմիր բանակն իր սպառազինության մեջ ունի ՍԻԱ<sup>1)</sup> ինտուիտուային ապարատներ (նկար 8 և 9): Նրանք աշխատում են անխափան, տալիս են գերազանց լսելիություն և, բացի դրանից, պաշտպանված են ոազմական թունավոր նյութերի վնասակար ազդեցությունից:

Դաշտային ճեռախոսային ապարատները ստորաբաժանվում են յերկու տիպի: Ֆոնիկալկան (фонические) և ինդրուկտորային (индукторные): Ֆոնիկական ապարատում՝ կենտրոնական կամ այլ ճեռավոր կայան կանչելիս սեղմում են կանչելու կոճակը (կհօպկա), փորը ներփորված և արկդի աջ կողմում (նկար 8), իսկ ինդրուկտորային ապարատում՝ պատացնում են ինդուկտորի կոթը: Ֆոնիկական ապարատում կանչը հաջողվում է զումմերի (հոսանքի ընդհատիչ) տզզոցով, իսկ ինդրուկտորային ապարատում՝ ելեկտրական զանգի զան-

1) ՍԻԱ—նշանակում է ունիփիկացիայի յենթարկված ապարատայսինքն միասնական (ընդհանուր) ապարատ բոլոր զորամասերի համար, զոր մացզած և անցյալում գործադրվող մի քանի տեսակ ապարատների փոխարեն:



Նկար 9. Մեր դաշտային հեռախոսային ՍՀԱ-Փ ապարատը.  
Ապարատի արկղը բաց է. Ապարատը միացված է յերկարացյին  
գծով, իսկ սեղմիչ ՂՅ միացված է հողին՝ ամպրոպի պատճառով:

Դահարությամբ: Ինդուկտորային ապարատները կիրառվում են զլիսավորապես շտարներում, իսկ ֆոնիդականները՝ զորամասերում: Ուստի մարտիկը պետք է իմանա նախ և առաջ ֆոնիկական ապարատը:

ՍՀԱ-Փ<sup>1)</sup> տիպի ֆոնիկական հեռախոսային ապարատը հավաքված է փայտայա արկղում, վորտեղ գտնվում է մարտկոցը (հոսանքի աղբյուրը) և ապարատի

<sup>1)</sup> ՍՀԱ կրծատ անվան հավելում Փ առաջ նշանակում է, վոր ապարատը ֆոնիկական է:

մյուս մասերը: Բաց անելով արկղի կափարիչը՝ կարելի յէ նրա միջից հանել միկրոհնուախոսային խողովակը (միկրոտելեֆոնից տրբու), վորը միացած է ապարատի այլ մասերի հետ ձգանի (անոր) միջոցով:

Միկրոհեռախոսային խողովակը (տրբու) բաղկացած է հեռախոսից և միկրոփոնից, վորոնք միացած են միմյանց հետ փայտայա կոթով: Հեռախոսը ծառայում է այլ հեռախոսային ապարատից արվող խոռքերն ընդունելու համար, իսկ միկրոփոնը՝ խոռքերը հաղորդելու համար:

Կոթի վրա կտ նաև խոռակցական կափարիչ: Յերբ հեռախոսիչը խոռում է, նա մասներով սեղմում է այդ կափարիչը, ինչպես վոր ցույց է արված նկար 8-ում: Յեթե կափարիչը սեղմած չլինի, մյուս կայանում խոռակցությունը չի լսվի: Իսկ յերբ հեռախորիչը լսում է, նա թուլացնում է կափարիչը (մատները բարձրացնում են): Խոռքերի ընդունման մոմենտին կափարիչի թուլացումն ուժեղացնում է լսելիությունը: Ավելի լավ է անվործ հեռախոսիչը, առավել ևս վոչ մասնագետմարտիկը, խոռակցության ժամանակ միշտ (և՛ ընդունման, և՛ հաղորդման ժամանակ) կափարիչը սեղմված պահի: Այլապես, յեթե իր ժամանակին չսեղմի կափարիչը, կամ բոլորովին հաղորդումը չի կատարվի, կամ կլսվեն միայն կիսատ ֆրագմենը ու բառեր:

Հեռախոսային ապարատները միանում են միմյանց հետ կամ անմիջականորեն, կամ կենտրոնական հեռախոսային կայանի միջոցով մեկուսացված լարերի (դաշտային կարելի) ողնությամբ:

Կենտրոնական կայանն սպասարկվում է կամուտատորով՝ և կամ 12 զծերի վրա: Կոմուտատորը՝ զա հատուկ ա-

պարատ ե, վորը հնարավորություն ե տալիս իսկույն միմյանց հետ միացնել նրան կցված այս կամ այն ծայրի կայանները: Կոմուտատորի մոտ հերթապահում ե փորձված հեռախոսիչը: Այդ հերթապահի պարտականությունն այն է, վոր հետեւ ծայրի կայանների կանչին, միացնի նրանց միմյանց հետ և հսկի կենտրոնական ու ծայրի կայանների միջև կանոնավոր կապ լինելու վրա:

Ցուրաքանչյուր հեռախոսային ապարատին (ծայրի կայանների) մարտական իրավության մեջ տալիս են վորոշ կանչանշան (ՊՕՅԻՎԻՈЙ), այսինքն պայմանական աղդանշան: Այդ անում են նրա հարմար, վորպեսզի հեռախոսով խոսելիս չանվանեն զորամասերը, հակառակորդի կողմից մեր խոսակցությունը ծածուկ լսելուց խուսափելու համար:

Որինակ՝ գնդացրային վաշտն ունի կանչանշան յերկու կետ ու մի զիծ, և նրա համարն է 14, կետերը և զիծը ցույց են տալիս, վոր գնդացրային վաշտը պետք ե կանչել յերկու անդամ կարծ և մեկ անդամ տեսական կերպով սեղմելով հեռախոսային ապարատի կանչելու կոճակը: Համար 14-ն առում են խոսելու ժամանակ՝ «գնդացրային վաշտ» խոսքի փոխարեն:

Յենթագրենք, վոր 1-ին վաշտի հեռախոսիչը, վորի պայմանական կանչանշանն ե մի կետ և համար 11, ուղում ե կանչել հեռախոսով գնդացրային վաշտի հեռախոսիչին:

1-ին վաշտի հեռախոսիչը նախ կանչում ե կենտրոնական կայանը: Դրա համար նա մի անդամ կարծ սեղմում ե կանչելու կոճակը (տալիս ե իր կայանի աղդանշանը): Կենտրոնական կայանը պատասխանում

ե հայտնելով իր պայմանական անունը, որինակ համար 16:

— Տվեր համար 14,— ասում ե 1-ին վաշտի հեռախոսիչը:


Մատնալով «պատրաստ ե» պատասխանը, նա յերկու անդամ կարծ և մի անդամ տեսական կերպով սեղմում ե կանչող կոճակը (յերկու կետ և զիծը—գնդացրային վաշտի կանչանշանն ե): Գնդացրային վաշտի հեռախոսիչը լսելով հեռախոսից յերկու կետ և ազդանշանը (զումմերի յերկու կարծ և մի տեսական զրնգոցը—աղդանշակը), խոկույն պատասխանում ե.

— Համար 14-ը լսում ե:

Դրանից հետո կայանը կանչող հեռախոսիչը տալիս ե իր կանչանշանը, «խոսում ե համար 11-ը». և իր հրամանատարի հրամանով սկսում ե հաղորդումը, որինակ՝

— «... Հակառակորդի վահերը կուրս են դալիս Մութ պուրակից և կուտակվում կլոր բարձունքի հետեւը: Մեր մասերը զրավեցին Սելեզնի զյուղի մոտի ձորակը»:

Յեթե հարկավոր հեռախոսագիր հաղորդի, ապա հաղորդովը նախ նախազգուշացնում ե այդ մասին այս խոսքերով՝ «ըն-



Նկար 10. Կարելի միացումը գծային սեղմիչին (չայկ) (յերկում) և ձողին՝ հողին միացնելու համար (ներքում):

դունեցէք հեռախոսազիրը», և սկսում ե հաղորդումը  
միայն «պատրաստ ե» կամ «հաղորդեցէք» պատաս-  
խանից հետո:

Հեռախոսով ընդունած յուրաքանչյուր բանավոր  
գեկուց կամ կարգադրություն պետք ե կրկնել,  
սխաներից խուսափելու համար և ապա ճշտորեն հայտ-  
նել հրամանատարին: Հեռախոսազիրն այլ կայանին  
հաղորդելիս պետք ե պահանջել, վորպեսզի ընդունովը  
կրկնի այն: Հաղորդման ճշտությունը հեռախոսով՝ մհձ  
զեր ե խաղում: Խոսակցության կամ հեռախոսազիրի  
խեղաթյուրումը կարող ե անուզգելի վեստ հասցնել:

Հեռախոսով պետք ե խոսել համաշափ, ճշգրիտ,  
պարզ: Անհասկանալի խոսքը հարկավոր ե՝ կրկնել  
կամ հաղորդել տառերով:


Խոսակցության համար բոլոր հեռախոսային պատ-  
րատները միացվում են հաղորդավարով (կարել): Դրա  
համար ապարատի ներսի շրջանակի դրամի կողմը կան  
չորս պտուտակային սեղմիչներ (ՎԻՆТОՎԵ ՅԱՋԱՄԱԿ  
ԿԼԵՄՄԵ), վորոնք նշված են  $\lambda\text{-1}$ ,  $\lambda\text{-2}$ ,  $\text{КЛ}$  և  $\Gamma\mathcal{Z}$  տա-  
ռերով և թվանշաններով (նկար 9 և 10): Յեթե ապա-  
րատները միացված են յերկու հաղորդավարով (յերե-  
լարային զիծ), ապա հաղորդավարերը կցվում են զժա-  
յին սեղմիչներ  $\lambda\text{-4}$  և  $\lambda\text{-2}$  (1 զիծ և 2 զիծ) հետ: Իսկ  
յեթե հաղորդավարը մեկ ե (մի լարային զիծ), նա  
կցվում ե  $\lambda\text{-1}$  սեղմիչի հետ, իսկ  $\lambda\text{-2}$  սեղմիչը միա-  
նում ե հողի հետ:

ГЭ (гроузовой—земля) սեղմիչի ողնությամբ ապա-  
րատում գտնվող շանթարգելը միանում ե հողի հետ  
ամպրոպի ժամանակ:  $\text{КЛ}$  (конденсатор—линейный)  
սեղմիչն ողտազործվում ե այն ժամանակ, յերբ խո-

սակցությունը տեղի յե ունենում գործող հեռազրավա-  
րի միջոցով:

Դաշտային հեռախոսային կարելը բաղկացած ե մի  
քանի մետաղալարերից, վորոնց վրա կա մեկուսացում  
(изоляция)—ուղին, վորը պահպանում ե մետաղալա-  
րերը ժանդառելուց և թույլ չի տալիս ելեկտրական  
հոսանքի վաթածք (յուեցա), յերբ կարելը քավում ե  
հողին: Ուղինն իր հերթին, փշացումից պաշտպանելու  
համար, պատաժ ե բամբակեղեն հյուսվածքով, վորը  
ներծծված ե հատուկ բաղադրությամբ (նկար 11):

Վորովհետեւ հեռա-



Նկար 11. Դաշտային հեռախոսային  
կարել Վերեկում ցույց են տրված  
կարելի բաղկացուցիչ մասերը, իսկ  
մեջտեղում և ներքեւում՝ ինչպես  
պետք ե նախապատրասել կարելն  
իր հրամանատարին,  
ըերը վոլորել լախտի պիս:

Կարելի փշացումներն ամենից հաճախ յերկու տեսակ  
են լինում՝ կարելի յերակի կարատում և մեկուսաց-


ման փչացում (նկար 12): Յերակի կտրվելը բոլորովին դադարեցնում և հեռախոսային կապը, իսկ մեկուսացման փչացումը պակասեցնում և խոսակցության լսելիությունը:

Յեթե մեկուսիչը պլոկված և կարելն այդ մասով կպչում և գետնին, կամ տեղի իրերից վորևէ մեկին, պետք և կարելի մերկացված մասը բաժանել գետնից կամ տեղական իրից՝ ինչպես այդ ցույց և տրված 12-րդ նկարում:



Նկար 12. Կարելի փչացումը և նրա գերացման ամենահասարակ յեղանակները (թե ինչպես պետք և միակցել կտրված կարելը, այդ ցույց և տրված 13-րդ նկարում):

Յեթե կարելը կտրված և, այն պետք և միակցել: Դրա համար կտրված կարելի յերկու ծայրերից մի քանի սանտիմետր (2—3 մատի չափ) զգուշությամբ պետք և դանակով հանել մեկուսիչը (հյուսվածքը և ուղինը), մերկացված մետաղալարերը մաքրել զանակով կամ բաճի բերանով մինչև փայլելը, վորից հետո լարերը կապել և ձգել (նկար 13): Գոյացած հանգույցը կապավորները յերկու անգամ փաթաթում են ուսուխած ժապավենով: Յեթե այդպիսի ժապավենն չկա, հանգույցը կարելի յե թողնել բայց, սակայն կարելի այդ տեղը պետք և հեռացնել գետնից կամ գետնին գտնվող առարկաներից (նկար 12):



Նկար 13. Ինչպես միաեցել կտրված կարելի ծայրերը:

Դեպի իրենց ուշագիր վերաբերմունք են պահանջում նաև «մերկ» հեռագրա-հեռախոսային լարերը, վորոնք կախված են հատուկ ժամանակավոր ձողերից, կամ մշտական սյուներից: Թեքված ձողը պետք և ուղղել վարպեսզի նա ուղիղ կանգնի: Լարերի վրա վորեն կողմանի իր տեսնելիս (փալաս, թոկ), պետք և գեն ցցել նրանց: Լարը կտրվելու մասին պետք և անմիջապես զեկուցել իր հարմանատարին:

Ծառ կարենը և հետեւ նույնպես թե ինչպես և անցկացված և բաղակված կարելը: Յեթե կարելը վատ

ե քողարկված, պետք ե վերացնել այդ թերությունը՝  
բայց այնպես, վոր կարելը չփասվի՛ Բաց վայրում  
կարելն անց ե կացվում ուղղակի գետնի վրայից: Յե-  
թե կարելն անցնում ե ճանապարհի յերկայնքով, այն  
անցկացնում են վոշ թե ճանապարհի վրայից, այլ նրա  
յեղերթից, այլապես նու կփշանա ճանապարհով անց-  
նող զորքից, գումարկից, ավտոմարիներից:

Ճանապարհի վրայից անցկացնելիս կարելը կախում  
են ձողերից, կամ աեղի իրերից (ծառեր, շինություններ):  
Յեթե ձողեր կամ տեղական իրեր չկան, ճանապարհի  
լայնքով փորում են փոքր առու, փորի միջից անց-  
կացնում են կարելը, ապա առուն ծածկում են հողով  
և թեթե կերպով տափանում են:

Կարելն անցկացնելու զանազան յեղանակները ցույց  
են տրված 14 և 15 նկարներում:

Կարելն անցկացնում են հատկապես դիտարանների  
և կրակային գիրքերի մոտ հակառակորդի ողային և  
գետնի դիտողներից քողարկված: Բաց վայրում գետնի  
վրայից անցկացված կարելը քողարկվում ե խոտով,  
մացաներով, ավազով, ձյունով (նայած ինչպիսի վայր-  
ե): Սակայն ավելի լավ է կարել անցկացնելու համար  
սպազործել ձորակները, հովիտները, խրամատները:  
Այս գեղքում պետք ե խուսափել խոնավ տեղերից և  
այն տեղերից, վորտեղ անձրևի ժամանակ կարող ե  
ջուր հավաքվել, և կարելը պետք ե անցկացնել ձորա-  
կի լանջից կամ գազաթից, ամբացնելով այն փոքր  
ցցերով:

Պահպանելով իր հազորդալարերը, մարտիկը պատե-  
րազմի ժամանակ պետք ե կարողանա դիտավորյալ  
կերպով փչացնել հակառակորդի հաղողալարերը, վոր-

պեսզի խանգարի նրա զորքերի ղեկավարումը: Այս-  
պես, նկատելով հակառակորդի հազորդալարը, հետա-  
յուրները պետք ե խսկույն կարատեն այն:


Մարտիկը պետք ե կարողանա վոչ միայն ոգտվել  
հեռախոսով, այլ և խնամել նրան: Անձրեսու յեղանա-  
կին հարկավոր ե նախապահպաննել ապարատը խո-  
չավությունից: Ապարատը պետք ե տեղափոխել  
զգուշությամբ, վորպեսի արկող չկոտրվի և չվասվի  
ներքին մասերից վորեն մեկը: Ունենալով իր տրա-  
մադրության տակ հեռախոսի ապարատ գետնի վրա  
աշխատելու համար, պետք ե նրա տակ փռել վորեն  
բան (դարձան, մահուզ, բրեգենս, շինել), կամ պետք  
ե տախտակ դնել:

Հեռախոսային ապարատի մոտ հերթապահություն  
անելիս պետք ե հիշել քողարկման մասին: Ապարատի  
հետ միասին պետք ե միշտ տեղավորվել ծածկված  
տեղում (թիկրի տակ, վայրի խորշերում), իսկ բաց  
տեղում՝ ճյուղերից և խոտից շինել հյուզակ (շալա-  
տիկ), ծածկ, կամ քողարկվել:


Միշտ պետք ե հիշել այն, վոր հակառակորդը կարող  
ե բռնել (գոլցնաբարար լսել) հեռախոսավ կատարված խո-  
սկակցությունը:

Հակառակորդը խոսակցությունը կարող ե բռնել  
շատ միջոցներով: Յերեկմն հակառակորդի հետախույզ-  
ները կամ լրտեսները կաշխատեն գաղտնի մոտենալ  
մեր հաղորդալարերին և միացնել նրանց իրենց հա-  
ղորդալարը՝ հեռախոսային ապարատով:

Հեռախոսային խոսակցությունները կարելի յե-  
քանել և գետնի միջոցով՝ հատուկ զորձիքներով, յեթե  
հեռախոսային զիծը միալար ե հողի հետ միացված:



Նկար 14. Կաբելի անցկացումը ճահճի վրայով, կամուրջով, ճանապարհի և տան վրայից:



Նկար 15. Կաբելի անցկացումը ցանկապատի, շինությունների յերկայնքով, փողոցը վրայից և հեռագրասյուներով:

Դրա համար հակառակորդն անձկատելիորեն ձգում է իր հաղորդալարը ծածուկ լսելու զործիքից՝ վորքան կարելի յե մոտ մեր հեռախոսային զժերին։ Մատեցրած հաղորդալարի ծայրը մի քանի մետրով մաքրում են մեկուսիչից, իսկ յեթե հնարավորություն կա, միացնում են հողի հետ։ Ըստ վորում, յեթե ծածուկ լսող և լսվող կայանների հողի հետ միացված կետերի հեռավորությունը 3—5 մետրից ավելի չէ, այդ գեպքում խոսակցությունը հեռախոսով՝ շատ լավ լսելի կղանահ հակառակորդին։

Հեռախոսային խոսակցությունները կարելի յե բըռնել և յերկլարային զժից (առանց հողին միացնելու), բայց զրա համար անհրաժեշտ ե զաղանաբար լսող կայանի հաղորդալարը տեղավորել հակառակորդի հեռախոսային զժից վորոշ հեռավորության վրա։

Ցուրաքանչյուրին հասկանալի յե, թե ինչպիսի մեծ փաս հճասնի զորքին, յեթե հակառակորդին հաջողվի ծածուկ լսել հեռախոսով կատարված բոլոր խոսակցությունները։ Ուստի հեռախոսային խոսակցությունները խլելու զեմ պայքարելու համար առաջավոր շերտում հակառակորդից մինչեւ 5 կիլոմետր հեռավորության վրա զործազրկում են յերկլարային զժեր։ Յեթե զրա հետ միասին կարելի մեկուսացումը կանոնավոր է, հակառակորդի համար անհամեմատ դժվար և ծածուկ լսել հաղորդումը։

Հեռախոսային խոսակցությունները հակառակորդի կողմից խլելուց և ծածուկ լսելուց խուսափելու համար, պետք ե խստությամբ պահպանել խօսակցության դիսցիլինան, հեռախոսով չհայտնել վոչ մի գաղտնի տեղեկություն և զորամասի անուն, չզբաղվել կողմ-

Նակի խոսակցությամբ։ Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում զաղանի տեղեկություններ հաղորդելու համար ոգտվում են պայմանական կոդով կամ ծածկագրով (шиֆր), այսինքն փոխարինելով մի խոսքը մշուսով, կամ տառերը՝ թվանշաններով։

### ԼՈՒՍԱԶԴԱՆՑԱՆՑԻՆ ԱՊԱՐԱՏՆԵՐ

Հեռախոսային կապը գործում է միայն այն ժամանակ, յերբ ապարատները միացնող հաղորդալարերը սարքին են։ Սակայն կովի ժամանակ հեռախոսային հաղորդալարը կարող է հետությամբ կարտվել ուղևրելից և գնդակներից, կամ պատահարար կարվել։ Ուստի կապի ավելի հուսալիության համար, նույնպես և այն գեղքերում, յերբ հեռախոսն ընդհանրապես գործադրելը



Նկար 16. Ուղղակի խոսակցություն յերկու գոստերի միջև։ Ապարատներն աճըսցված են հրացանների վրա (պոստ № 1—ավելի վրա պոստ № 2—խաչմերուկի վրա (ի հաջորդականություն)։

գժվար ե (որինակ՝ լեռներում զիծ անցկացնելու համար ժամանակի սղությունը և այլն), ոգտվում են լուսագրանեանային ապարատներով, վորոնք թեթև են, պարզ և հնարավորություն են տալիս խոսակցել բավարարացած հեռավորության վրա թե ցերեկը և թե զեշերը։

